

**ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**  
**ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴԵՊՔԵՐԻ**  
**ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՁԵՎԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն ուղեցույցով սահմանվում է խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրության կազմման ընթացակարգը:

2. Հետազոտությունն իրականացվում է բժշկի և հոգեբանի (այսուհետ նաև՝ Մասնագետներ) կողմից:

3. Բժշկական հետազոտությունների արդյունքում կազմվող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) լրացվում է գրական հայերենով, ընթեռնելի և պարզ:

4. Արձանագրությունում լրացված տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ժամանակագրական առումով ճշգրիտ:

5. Արձանագրությունը լրացվում է առանց ջնջումների: Սպիտակեցնող կամ այլ բնույթի նյութեր չեն կարող օգտագործվել սխալները, վրիպակները կամ ցանկացած այլ լրացված տեղեկությունները չեղարկելու համար:

6. Արձանագրությունում սխալ լրացված բառը չեղարկվում է՝ համապատասխան բառի վրա գիծ քաշելու միջոցով: Սխալ լրացված բառի փոխարեն լրացվում է ճիշտ տարբերակը: Արձանագրությունը լրացնող բժիշկը կամ հոգեբանը ճիշտ տարբերակի մոտ կատարում է նշում «Ուղղումն իմ կողմից է» բովանդակությամբ, և ստորագրում:

**II. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

7. Քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման ընթացքում բժիշկը լրացնում է Արձանագրության համապատասխան տողերը՝ հետևյալ կարգով.

1) «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում հաջորդաբար լրացվում են՝

ա. հետազոտության կատարման ամսաթիվը,

բ. հետազոտությունը կատարելու պահանջ ներկայացրած անձի անունը, ազգանունը, հայրանունը,

գ. հետազոտության իրականացման տևողությունը՝ նշելով սկիզբը, ավարտը,  
դ. հետազոտության ենթարկվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,  
ծննդյան տարեթիվը և ամսաթիվը, ծննդյան վայրը, սեռը՝ արական/իգական,  
հետազոտության ենթարկվող անձի հաշվառման համարը,

ե. հետազոտության կատարման պատճառը,

զ. բժիշկ մասնագետի/հոգեբանի անունը, ազգանունը, հայրանունը,  
թարգմանչի առկայությունը կամ բացակայությունը (եթե առկա է նշվում է անունը,  
ազգանունը, հայրանունը, ինչպես նաև թարգմանության լեզուն),

է. իրազեկված համաձայնության առկայություն կամ բացակայության և  
վերջինիս պատճառների մասին: Իրազեկված համաձայնությունը ենթադրում է  
հետազոտության ենթարկվող անձի կողմից հետազոտության նշանակության և  
հետևանքների գիտակցումը:

ը. հետազոտության ենթարկվող անձին ուղեկցող անձի անունը, ազգանունը,  
հայրանունը/ պաշտոնը,

թ. հետազոտության ժամանակ ներկա գտնվող անձանց անունները,  
ազգանունները, հայրանունները, պաշտոնները, ինչպես նաև նրանց ներկայության  
պատճառը,

ժ. հետազոտության ենթարկվող անձի նկատմամբ զսպման միջոցների  
կիրառման առկայության մասին տեղեկատվությունը,

ժա. այն անձի անունը, ազգանունը և պաշտոնն ում փոխանցվել է  
Արձանագրությունը՝ նշելով փոխանցման ամիսը, ամսաթիվը և ժամը.

ժբ. ազատությունից զրկված անձանց բժշկական հետազոտության  
իրականացման սահմանափակումների/խոչընդոտների առկայության կամ  
բացակայության մասին՝ նկարագրելով կիրառվող բոլոր սահմանափակումները և  
խոչընդոտները:

2) «Հետազոտություն իրականացրած մասնագետի որակավորումը» բաժնում  
համապատասխան մասնագետները լրացնում են իրենց՝

ա. բժշկական կրթությունը և մասնագիտացումը,

բ. հոգեբանության և/կամ հոգեբուժության գծով անցած վերապատրաստումը,

գ. խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ փաստեր  
արձանագրելու հարցում ունեցած փորձառությունը (եթե այդպիսիք առկա են),

դ. Արձանագրությանը կցվում է նաև Մասնագետների  
ինքնակենսագրությունները:

3) «Խոշտանգման ենթադրյալ դեպքի կամ ենթադրյալ վատ վերաբերմունքի  
այլ ձևերի քննությանն առնչվող հրապարակումներ» բաժնում Մասնագետը (բժիշկը)  
տեղեկացված լինելու դեպքում նշում է գործի քննությանն առնչվող զանգվածային  
լրատվության միջոցների հրապարակումները կամ հետազոտության ենթարկվող  
անձի հարազատների հրապարակավ հայտարարությունները:

4) «Հետազոտվողի վերաբերյալ հիմնական տեղեկություններ» բաժնում  
հաջորդաբար նշվում է հետազոտվող անձի՝

ա. Կրթության և ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկատվությունը.

բ. անամնեզը՝ հավաքագրվում է ամբողջական անամնեզը, այդ թվում՝ նախկինում ունեցած հիվանդությունների, կատարված վիրահատությունների կամ հոգեբուժական խնդիրների վերաբերյալ տեղեկությունները: Տվյալ բաժնում անհրաժեշտ է արձանագրել մինչև ազատությունից զրկելը ստացած վնասվածքների և դրանց ցանկացած հնարավոր հետևանքի մասին տվյալները,

գ. Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի նախորդ բժշկական հետազոտությունների ամփոփ նկարագրությունը՝ ըստ հետազոտվողի կամ ըստ առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է),

դ. հոգեբանասոցիալական անամնեզը նախքան ազատությունից զրկելը (եթե այդպիսին առկա է):

5) «Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքի մասին հայտարարություն՝ ըստ հետազոտվողի» բաժնում նշում է՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի պատմողական նկարագրությունը (արարքի նկարագրությունը, ժամանակագրությունը, այդ թվում՝ մեթոդները), որը շարադրվում է հարց ու պատասխանի ընթացքում հետազոտվողի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա՝ ներառելով ֆիզիկական ու հոգեբանական ախտանիշներով պայմանավորված բողոքները:

6) «Հետազոտվողի ֆիզիկական ախտանիշներ» բաժնում հետազոտող բժշկի կողմից լրացվում են հետազոտության ընթացքում ի հայտ եկած սուր և քրոնիկ ախտանիշները:

7) «Քրոնիկ ախտանիշներ» բաժնում բժշկի կողմից լրացվում են հետազոտվողի ուղեկցող հիվանդությունները:

8) «Ֆիզիկական զննում» բաժինը լրացնելու համար հետազոտվողի իրազեկված համաձայնությունը ձեռք բերելուց հետո՝ Մասնագետը (բժիշկը) իրականացնում է ամբողջական ֆիզիկական զննում: Հետազոտվողի սեռական օրգանների զննությունն իրականացման նպատակով անհրաժեշտ է ստանալ հետազոտվողի լրացուցիչ համաձայնությունը: Հնարավորության դեպքում Հետազոտվողն իրավունք է ունենում ընտրելու բժշկի սեռը և, եթե առկա է թարգմանչի ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն, ապա նաև թարգմանչի սեռը:

Հնարավորության դեպքում, զննման սենյակը պետք է լինի բավարար չափով լուսավորված և կահավորված՝ զննման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներով: Եթե նշված պայմաններն առկա չեն, ապա դրա մասին նշվում է Արձանագրության մեջ:

Հետազոտություն իրականացնող մասնագետը նշում է գործին առնչվող բոլոր տվյալները՝ գրանցելով սույն հրամանի հավելված N 4-ով նախատեսված XVI-րդ բաժնի խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերը արձանագրելու համար անատոմիական գծապատկերում՝ բոլոր վնասվածքների տեղակայումը և դրանց բնույթը: Հետազոտության արդյունքում լրացվում են նաև համապատասխան օրգան-համակարգերի զննման արդյունքները՝

ա. Ընդհանուր տեսքը,

- բ. Մաշկային ծածկույթը,
  - գ. Դեմքը և գլուխը,
  - դ. Աչքերը, ականջները, քիթը և կոկորդը,
  - ե. Բերանի խոռոչը և ատամները,
  - զ. Կրծքավանդակը և որովայնը (ներառյալ կենսական ֆունկցիաների ցուցանիշները),
  - է. Միզասեռական համակարգը,
  - ը. Ոսկրամկանային համակարգը,
  - թ. Կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգը,
- 9) «Հոգեբանական անամնեզը (հետազոտությունը)» բաժնում Մասնագետի (հոգեբան) կողմից նշվում են՝
- ա. Գնահատման մեթոդները,
  - բ. Առկա հոգեբանական գանգատները,
  - գ. Խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքի այլ ձևերին հաջորդող ժամանակահատվածի անամնեզը,
  - դ. Խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքի այլ ձևերին անմիջապես նախորդող ժամանակահատվածի անամնեզը,
  - ե. Հոգեբանական և/կամ հոգեբուժական անամնեզը,
  - զ. Թմրանյութերի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման և չարաշահման պատմությունը,
  - է. Մտավոր վիճակի հետազոտության արդյունքները,
  - ը. Սոցիալական գործունեության գնահատումը,
  - թ. Հոգեբանական թեստավորման արդյունքները,
  - ժ. Նյարդահոգեբանական թեստավորման արդյունքները:
- 10) «Լուսանկարներ» բաժնին համահունչ՝ Արձանագրությանը պետք է կցվեն Հետազոտվողի լուսանկարները: Լուսանկարները նկարվում են Մասնագետի (բժշկի) կողմից լուսանկարչական սարքի միջոցով՝ երաշխավորելով բժշկական գաղտնիքի և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջների պահպանումը:
- 11) «Ախտորոշիչ թեստավորման արդյունքները» բաժնի համաձայն՝ Արձանագրությանը կցվում են իրականացված ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները:
- 12) «Խորհրդատվություն» բաժնում նշվում է, թե Մասնագետների կողմից ինչ մասնագիտական խորհուրդներ են տրվել Հետազոտվողին:
- 13) «Արդյունքների մեկնաբանություն» բաժնում լրացվում է խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման հավանական դեպքի հետ ֆիզիկական և հոգեբանական ախտանիշների հնարավոր կապի մասին տեղեկատվությունը: Անհրաժեշտ որևէ տեսակի բժշկական և հոգեբանական օգնության կամ հետագա զննման վերաբերյալ նշվում է առաջարկություն: Բաժինը լրացվում է հիմք ընդունելով հետևյալ հարցադրումները՝

14) «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվում է եզրակացություն Հետազոտության տվյալների (ֆիզիկական և հոգեբանական տվյալներ, հիմնական տեղեկություններ, լուսանկարներ, ախտորոշիչ հետազոտությունների արդյունքներ և այլն) ու խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի մասին հայտարարությունների համապատասխանության վերաբերյալ: Վերահաստատվում են առկա ախտանիշները և կենսագործունեության սահմանափակումը, որոնք հետազոտվողի մոտ շարունակում են պահպանվել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետևանքով: Ներառվում են առաջարկություններ հետազոտվողին հետագա հետազոտության ենթարկելու և բժշկական օգնություն տրամադրելու վերաբերյալ:

Ֆիզիկական տվյալներ.

ա. Որոշել, թե որքանո՞վ են սուր և քրոնիկ ֆիզիկական ախտանիշներն ու կենսագործունեության սահմանափակումը համապատասխանում հայտարարված դեպքի հետ:

բ. Որոշել, թե որքանո՞վ են ֆիզիկական գննման արդյունքները համապատասխանում հայտարարված դեպքի հետ:

Հոգեբանական տվյալներ.

ա. Որոշել, թե որքանո՞վ են հոգեբանական հետազոտության արդյունքները համապատասխանում ենթադրյալ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքի հետ:

բ. Տալ գնահատական այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք հոգեբանական հետազոտության արդյունքները հետազոտվողի մշակութային և սոցիալական համատեքստում համարվում են ծայրահեղ սթրեսի դեպքում սպասված կամ դրան բնորոշ ռեակցիաներ:

գ. Նշել հետազոտվողի փաստացի վիճակը՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում ենթադրյալ տրավմայի հետ կապված մտավոր խանգարումների դինամիկան, այսինքն՝ ո՞րն է ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքի հետ համընկնող ժամանակահատվածը և ապաքինման ո՞ր փուլում է գտնվում տվյալ անձը:

դ. Բացահայտել անձի վրա ազդող՝ զուգահեռ առկա սթրեսային գործոնները (օրինակ՝ շարունակվող հալածանքը, ընտանիքի և սոցիալական դերի կորուստը և այլն), ինչպես նաև դրանց հնարավոր ազդեցությունը տվյալ անձի վրա:

15) «Բժշկական հետազոտության իրականացման սահմանափակումների/ խոչընդոտների մասին հայտարարություն» բաժնում Մասնագետներն ընտրում են նշված տարբերակներից մեկը, այն է՝ առանց կողմնակի միջամտության, սահմանափակումների կամ խոչընդոտների Հետազոտություն իրականացնելու կամ Հետազոտությունը սահմանափակումների պայմաններում իրականացնելու վերաբերյալ և լրացնում են համապատասխան տողերը՝ նշելով անունը ու ազգանունը: